ԱՐՄԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՆԱՀԱՆԳԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 14-15-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հոդվածում պատմագիտական, մանկավարժական աղբյուրների և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա, համառոտակի լուսաբանվել են Սյունաց նահանգի կրթական գործի կազմակերպիչների լուսավորական գործունեությունը՝ 14-15-րդ դարերում: Այդ գործիչները ժամանակին եղել են կրթական գործի բարեկորոգիչներ, նոր դպրոցի հիմնադիրներ, մանկավարժական մտքեր հղացող, դրանք խիզախորեն կյանքի կոչող ուսուցչապետեր և Սյունաց բարձր տիպի դպրոցներում դասավանդել հումանիտար, բնագիտական, աստվածաբանության առարկաներ, պատրաստել բարձրորակ մասնագետներ: Վերլուծաբար ներկայացվում են նաև նշանավոր գործիչների դասավանդման առաջավոր փորձը, քննարկվում նաև մանկավարժական, պատմական ու տեսական արժեք ունեցող այլ հարցեր:

Բանալի բառեր՝ *կրթություն, դպրոց, լուսավորական ձեռքբերումներ, նշանավոր գործիչներ, բարձրագույն դպրոց, Տաթևի համալսարան, դպրոցաշինություն, ձեռագրատուն մատենադարան, մանկավարժական կադրեր:*

Կրթությունը Հայաստանում հազարամյակների պատմություն ունի և բոլոր ժամանակներում դիտվել է որպես ազգային ինքնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոն: Կրթությունը և գիտությունը առանձնահատուկ դեր ունեն մեր ժողովրդի կյանքում: Պատմականորեն հաստատված է,որ մեր ժողովրդի զարգացման հիմնական միտումը դարեր ի վեր եղել է կրթագիտական ուղղվածությունը: Եվ դա առաջին հերթին նպաստել է մեր ժողովրդի, նրա լեզվի, մշակույթի պահպանությանը: Եվ եթե պետականություն ու քաղաքական անկախություն ունեցած ժողովուրդների համար դպրոցը և կրթությունը եղել և մնում են սոսկ զարգացման ու առաջադիմության միջոց,ապա դարեր շարունակ իր պետականությունը կորցրաց և օտարի բարբարոսական տիրապետության տակ տառապած մեր ժողովրդի համար դրանք ամենից առաջ ծառայել են որպես զենք՝իր գոյատևման ու ազատության համար մղած պայքարում: Չնայած քաղաքական իրար հաջորդող ծանր անցուդարձերին ու դրանց հետևանքով ստեղծված աննպաստ պայմաններին, այնուամենայնիվ, դեռ հնագույն ժամանակներից սկսած հայոց կրթական օջախները գործել են անընդհատ, շարունակաբար, հաջորդել են միմյանց երբեք չի կտրվել տարբեր նահանգներում, այդ թվում Սյունաց նահանգում, գործող հայ դպրոցական կյանքի թելը: Ճիշտ է, իրար հաջորդած պատերազմական պայմաններում նա խիստ բարակել է, նվազել, ապրել մահամերձ շնչով, բայց նա չի կտրվել, շարունակել է պահպանել իր կենսահաստությունը՝ շնորհիվ նվիրյալ կրթական գործի կազմակերպիչների արգասավոր լուսավորական գործունեության:

Սույն հոդվածում պատմագիտական աղբյուրների և այլ նյութերի ուսումնասիրության ու պատմահամեմատական վերլուծության հիման վրա համա-

ռոտակի լուսաբանվում է Սյունյաց նահանգի կրթական գործի կազմակերպիչների լուսավորական գործունեությունը քննարկվող ժամանակաշրջանում՝ 14-15-րդ դարերում: Ի դեպ,նշենք,որ սա հատուկ հետազոտության թեմա է, և հնարավոր չէ մեկ հոդվածում տալ քննարկվող բոլոր հարցերի գիտական սպառիչ պատասխանը: Սակայն կփորձենք հնարավորինս ժամանակագրական կարգով ներկայացնել նշանավոր գործիչների անգնահատելի ծառայությունները՝ Սյունաց նահանգում կրթական գործի կազմակերպման ու լուսավորության բնագավառում:

Հայ դպրոցի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում /1,13/ հիշատակվում է, որ հայոց դպրության ամենահին օջախների մի մասը հաստատված է եղել Սյունյաց նահանգում: Այդ կրթական լուսավորական, հոգևոր-մշակութային օջախները անմար էին ու շեն: Նրանք կենաց ու մահու գոտեմարտում մաքառում էին և պահում իրենց կենսահաստատությունը, գործում էին անընդհատ, երբեմն էլ նույնիսկ երկրամասի քաղաքական ու տնտեսական ամենաաննպաստ պայմաններում: Այդ դպրոցների՝ /Սյունյաց բարձր տիպի դպրոց, Տաթևի համալսարան, Թանահատի կամ Թանատի, Հավուց Թառի, Հերմոնի, Երնջակի Քռնա դպրոցներ և այլն/, դերը վիթխարի է Սյունյանց քաղաքական, մշակույթային և կրթական կյանքի պատմության մեջ: Երախտաշատ մանկավարժ, գիտնական Աբ. Մովսիսյանը հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմությանը նվիրված իր արժեքավոր աշխատության երկրորդ բաժնում գրում է. «Սյունյաց երկիրը, Արարատից հետո, հայ դասական դպրոցի ստեղծման պահպանման և զարգացման առաջին, համեմատաբար ամենապահով վայրն է եղել: Այնտեղ են մշակվել գիտության և մասնավորապես հայագիտության մի շարք առարկաներ: Սյունյաց կրթական օջախները այդ գիտությունների զարգացման ու պահպանման ամենակարող ու հավատարիմ օջախներն են եղել» /2,14/:

Անուրանալի է այն իրողությունը, որ դարեր շարունակ Սյունաց նահանգի առաջնորդների, հոգևոր, մշակութային, կրթական գործիչների /սկսած Սյունյաց դպրոցի ամենահայտնի դեմքերից՝ Պետրոս Սյունեցու, Վրթանես Քերթողի, Մաթուս աղայի, Մովսես Քերթող Սյունեցու, Սահակադուխտ Սյունեցու և հետագա դարերի գործիչներից ընդ հուպ մինչև մեր ուսումնասիրության ժամանակաշրջանը/ հոգածության շնորհիվ Սյունաց աշխարհում, նույնիսկ քաղաքական ամենածանր պայմաններում, պահպանվել է ազգային կրթօջախների կենսահաստատությունը: Մինչև 14-րդ դարը, հոգևոր մշակութային, կրթական գործիչները Սյունյաց նահանգում ծավալել են մշակութային, շինարարական դպրոցաշինության լայն գործունեություն: Նրանց շնորհիվ վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ, ստեղծվել են հարուստ ձեռագրատուն, դպրանոց, բարձրարժեք ձեռագրերի մատենադարան /Տաթևի վանքում/, կրթվել են հոգևոր հովիվներ, որոնք իրենց նպաստն են բերել Սյունյաց, ինչպես նաև հայոց նահանգների մտավոր ու մշակութային կյանքի զարգացմանը:

Նոր պատմաշրջաններում /14-15-րդ դարերում/, շարունակելով անցյալ դարերի հոգևոր մշակութային կրթական գործիչների փառավոր ավանդույթները, Սյունյաց նահանգի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչները՝ Հովհան Որոտնեցին, նրա տաղանդավոր աշակերտներ՝ Հակոբ Ղրիմեցին, Մելիք-

սեթ Սյունեցին, Գրիգոր Տաթևացին նրա շնորհալի աշակերտներ՝ Մաթևոս Ջուղայեցին, Առաքել Սյունեցին, Թովմա Մեծոփեցին, կին լուսավորիչ մանկավարժ Աստղիկը /նրա ազգանունը անհայտ է/ և շատ ուրիշներ ևս հաղթահարել են բազում դժվարություններ, իրենց շուրջը համախմբել ժողովրդին մտավոր կարող ուժերին, և պահպանել երկրամասի ազգային կրթական օջախները՝ քաղաքական կյանքի ծանր կացության պայմաններում: Իսկ դա պայմանավորված էր նրանով, որ այդ վայրերում եղել են աշխարհագրական նպաստավոր պայմաններ /ինչպես փոքրիկ Սյունիքում՝ Արցախում/, և երկրի վրա հարձակվողներին դիմադրող ուժեր: Նման իրադրության մեջ ահա Սյունյաց նահանգի կրթական օջախները կենաց ու մահու գոտեմարտում մաքառում էին և պահում իրենց կենսահաստատությունը՝ այդ գործիչների հոգածության շնորհիվ: Նրանք կարողացան հնարավորինս պահպանել ու վերակերտել նախնյաց ստեղծած արժեհամակարգը, այն համապատասխանեցնել ժամանակի շնչին, ու պահանջներին՝ նպաստելով հազարավոր ժողովրդի հոգևոր վերակենդանացմանը և վերափոխմանը: Ժողովրդական լուսավորությունը, հատկապես կրթական գործը դառնում է Սյունյաց նահանգի նշանավոր գործիչների մանկավարժների կենսական խնդիրներից մեկը:

Մեր ձեռքի տակ եղած պատմագիտական աղբյուրների, և փաստագրական այլ նյութերի նորովի ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել թեկուզ և համառոտակի, ներկայացնել այդ գործիչների բեղուն լուսավորական գործունեությունը Սյունյաց նահանգի կրթական օջախներում:

Սյունյաց դպրոցի պատմության տարբեր շրջաններում /14-15-րդ դդ./ հայտնի և անհայտ բազմաթիվ ուսուցիչ-ուսուցչապետեր, կրթական գործի կազմակերպիչներ հիմնել են դպրոցներ, լուսավորական օջախներ, նվիրվել են աճող սերնդի կրթության և դաստիարակության պատվավոր գործին: Նրանք համատեղել են իրենց հայենանվեր լուսավորական գործունեությունը՝ ղեկավարել ազգային–ազատագրական շարժումը, պայքարել օտար զավթիչների դեմ, վառ պահել ազգի պայքարի ոգին, ստեղծել ու թողել հարուստ ժառանգություն հայ դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում: Նույնիսկ անբարենպաստ իրադրության պայմաններում կրթական նվիրյալ գործիչները մեծ սիրով պահում պահպանում և ծաղկեցնում են հայ մշակույթն ու դպրոցը, գրականությունն ու գիտությունը, միաժամանակ բարձր տիպի դպրոցներում (համալսարանում) պատրաստում են մանկավարժական բարձրորակ կադրեր, որոնք շարունակում են իրենց երախտաշատ ուսուցչապետերի հայրենանվեր գործունեությունը:

Այս ժամանակաշրջանում է լուսավորական արգասավոր գործունեություն ծավալել Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նշեցու տաղանդավոր աշակերտ, ականավոր գիտնական մանկավարժ Հովհան Որոտնեցին: Հակասական կարծիքներ կան Որոտնեցու ծննդյան ու մահվան տարեթվերի վերաբերյալ պրոֆեսոր Ցոլակ Սիմոնյանի աշխատությունում /3-19/, հիշատակում է (1313/15-1380/88թթ.):

Գիտական գրականության մեջ մատնանշվում է /4-10/, որ մեծ ուսուցչապետ, լուսավորիչ մանկավարժ Հովհան Որոտնեցին սկզբում իր վարդապետական–ուսուցչական գործունեությունը ծավալում է Գլաձորում, Ապրակունիսում,

այնուհետև Որոտանում ու Տաթևի վանքի բարձր տիպի դպրոցում, որը նրա գործունեության շրջանում փաստորեն դառնում է կատարյալ համալսարան: Հայտնի է, որ Սյունյաց դպրոցներից շատերը, այնպես էլ Տաթևի բարձր տիպի դպրոցը այլևս այն փայլը չունեին 12-րդ դարի վերջերին, նրանք ինչպես Սյունաց պատմիչ Ստեփանոս Օրբելին է նշում, անչափ քայքայվել էին իրար հաջորդող ավերիչ արշավանքների հետևանքով և «հին աթոռն աւերեալ և ապականեալ էր և Սյունյաց աթոռն ու դպրոցը փոխադրվել էր Նորավանք» /5-20/: Օտար զավթիչների (թուրքերի և թաթարների) մեծ ավերումներից հետո, 13-րդ դարի վեջերին Տաթևը վերաշինվում ու ծաղկում է վերստին, իսկ 14-րդ դարի կեսերից առավել մեծ հռչակ է հանում հատկապես այն ժամանակվա ամենահեղինակավոր ուսուցչապետի՝ Հովհան Որոտնեցու, ապա նրա տաղանդավոր աշակերտ՝ Գրիգոր Տաթևացու գործունեության շրջանում: Հիրավի, ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրենց բեղմնավոր լուսավորական գործունեությունն են ծավալել նաև նրանց աշակերտները, որոնք հետագայում դարձել են անվանի գիտնականներ, հոգևոր մշակույթային գործիչներ և այլ մասնագետներ:

Համբավավոր գիտնական, մանկավարժ Հովհան Որոտնեցու գործունեության շրջանում Տաթևը լուսավորական շարժումների, հոգևոր մշակույթային կենտրոնի համբավ է ունեցել: Այստեղ մեծ ուսուցչապետի եռանդուն գործունեության շնորհիվ, ծավալվել է մշակույթային, շինարարական, լուսավորական գործունեություն, արմատական վերափոխումներ են կատարվել Տաթևի ուսումնագիտական կրթօջախի ուսումնադաստիրակչական աշխատանքների համակարգում ստեղծվել է հարուստ ձեռագրատուն/մատենադարան/, նա իր սաներին հանձնարարում է հավաքել Սյունաց վանքերի և եկեղեցիների ձեռագիր մատյանները և կենտրոնացնել մատենադարանում: Դպրոցական նշանավոր գործիչը կրթության գործի համար վճռական նշանակություն էր տալիս գրադարանին: Այդ մասին պրոֆեսոր Աբ. Մովսիսյանը գրում է «Մանավանդ այն դպրոցների համար, ուր տասնյակ, իսկ երբեմն էլ/ հատկապես Տաթևում/ 100 –ից ավելի աշակերտներ էին սովորում: Այդպիսի դպրոցների համար անհրաժեշտ էին տարբեր բովանդակության շատ գրքեր, բազմացրած օրինակներով, մանավանդ այն առարկաների վերաբերող գրքեր, որոնք ուսուցանում էին տվյալ դպրոցում» /6-15/: Վաստակաշատ գիտնական մանկավարժը հայերեն ձեռագիր», «Հիշատակարաններ» պատմագիտական աղբյուրից վկայում է այն փաստը, որ Որոտնեցին գրադարանը հարստացնելու և մասնավորապես դպրոցական նպատակների համար անհրաժեշտ գրքեր ձեռքբերելու համար գործադրում էր այսպիսի միջոց էլ /7-16/: Նա ուղարկում էր իր լավագույն աշակերտներին՝ ձեռներեց գրիչներին ու նկարիչներին երկրի այլ վայրերը և նույնիսկ երկրից դուրս եղած հայկական վանքերը, գրատներն ու մատենադարանները, որ ընդօրինակեն այն գրքերը, որոնցից ունեն և որոնցով հարստացնեն Տաթևի գրադարանը: Որոտնեցին այս գրադարանին է նվիրել նաև իր ձեռագիրը՝ փիլիսոփայական, աստվածաբանության, մարդակազմության, մանկավարժության վերաբերյալ աշխատությունները: Գրադարանը համալրում է նաև թարգմանական գրքերով ու իր սաների ստեղծագործություններով: Մեծ ուսուցչապետի այս ուշագրավ ձեռնարկումը ավանդաբար մնաց ու դարձավ

մի ուսանելի օրինակ հայոց նշանավոր դպրոցների ու դպրապետերի համար: Որպես անժխտելի փաստ, այս ամենը վկայում է Սյունեցու նշանավոր գործչի սերն ու պատկառանքը կրթության ու դպրոցի նկատմամբ:

Սյունյաց դպրոցի պատմության մեջ Որոտնեցին բացառիկ դեմք էր, կրթական գործի բարենորոգիչ նոր դպրոցի հիմնադիր, մանկավարժական մտքեր հղացող և դրանք խիզախորեն կյանքի կոչող ուսուցրապետ: Երկար տարիներ՝ որպես ուսուցիչ /ռաբունապետ/ աշխատել է Սյունյաց, ինչպես նաև Արարատյան նահանգի դպրոցներում, դասավանդել քերականություն,փիլիսոփայություն,մանկավարժություն, երկրաբանական,ասնվածաբանական և բնագիտական առարկաներ: Նրա անուրանալի ծառայութունն այն է, որ պարզ ու որոշակի կարգ ու կանոն մտցրեց դպրոցական գործերի մեջ, դրանով իսկ շարունակելով և ավարտին հասցնելով՝ հայկական վերածննդի դարաշրջանի ականավոր գործիչ Գրիգոր Մագիստրոսի կողմից դեռևս ավելի քան 300 տարի առաջ սկսած, բայց կիսատ թողած գործը: Ժամանակաշրջանի հայ գիտնական,մանկավարժության ռահվիրանը պարտադիր դարձրեց աշխարհիկ,բնագիտական գիտությունների և այլ առարկաների անցումը, արմատավորեց դաստիարակության և ուսուցման նորագույն մեթոդներ, զբաղվեց ոչ միայն հոգևոր մշակութային, այլև աշխարհիկ ու հասարակական դպրոցներով, այս մեթոդներն ու ձեռնարկները երկար տարիներ օգտագործվում էին հայկական, այդ թվում Արցախի դպրոցներում:

Որոտնեցու դպրոցներում բացի վերոնշյալ գիտություններից, ուսուցանվում էին նաև արվեստներ,արհեստներ,որոնք կապված էին գրչության արվեստի և գրքի պատրաստման հետ: Գրիգոր Տաթևացին վկայում է, որ Որոտնեցին գիտությունների հետ ուսուցանում է նաև արհեստներ, ինչպես օրինակ, մագաղաթի պատրաստումը, այդ մասին դա գրում է. «Զմագաղաթս նոյն ինքն մեծ վարդապետն իւր ձեռքն գործեաց, և մեզ ուսոյաց զսոյն արուվեստ»/8-17/: Որոտնեցու դպրոցներում պատրաստում էին ուսուցիչներ, նկարիչներ, ծաղկազարդողներ փորագրողներ, կազմարաններ, թուղթ կոկողներ: Մեծ ուսուցչապետի մի այլ աշակերտ՝ Հակոբսը, գրում է որ ինքը սովորել է թուղթ կոկելը իր ուսուցչից և աշխատում է որպես թուղթ կոկող» /9-18/:

Լայն համբավի տեր գիտնական, լուսավորիչ մանկավարժ Որոտնեցու աշակերտներից մեկը՝ Մելիքսեթ Սյունեցին իր ընդօրինակաց «գիրք առաքինութեանց»-ի հիշատակարանում /1376թ/ այսպես է դրվատում իր ուսուցչապետին «Ի դառնութեան ժամանակիս լույս ծագեաց մթացեալ և խավարեալ ազգիս՝զմեծ վարժապետն մանկանց, զրաբունապետն վարդապետաց, զյովհաննես վարդապետ Որոտնեցի,որ սնուցանէր զմանկունս, ջամբելով զկերակուրն կենաց հոգուց և զհանգիստ մարմնավոր պիտոյից» /10-6/:

Հովհան Որոտնեցու տաղանդավոր աշակերտների՝Հակոբ Ղրիմեցու, Գրիգոր Տաթևացու, Գևորգ Երզնկացու գործունեության տարիներին Տաթևի ուսումնագիտական կրթօջախը հայտնի դարձավ իր անվանի սաներով,բազմատարր ու մեծաքանակ աշակերտներ ով, որոնք հավաքվել էին Հայաստանի տարբեր նահանգներից, Արցախի գավառներից, երկրից դուրս հայաբնակ վայրերից:Նրանց ձեռնարկումների շնորհիվ Տաթևի համալսարանում դասավանդող առարկաների թվում գերակշռող տեղ էին գրավում բնագիտական և հու-

մանիտար գիտությունները: Այդ բարձրագույն դպրոցի համբավը մեծ էր նրանով, որ Որոտնեցուց հետո երեք տասնամյակ ղեկավարում էր բազմավաստակ գիտնական, կրթական նշանավոր գործիչ Գրիգոր Տաթևացին: Այդ ժամանակահատվածում Տաթևացու եռանդուն գործունեության շնորհիվ բարձր տիպի դպրոց-համալսարանը հանդիսացել է երկրամասի/ նկատի ունենք փոքր Սյունիքի-Արցախի/, հասարակական, քաղաքական ու մշակութային գիտակրթական կյանքում, լուսավորության բնագավառում նշանավոր դեր խաղացած ուսումնական հաստատություններց մեկը՝Հայաստանում, և իր որոշակի տեղն ունի մեր ազգային առաջընթացի պատմության մեջ: Նրանում լիովին իրենց արտացոլումն են գտել երկրամասի հայ հասարակական կյանքի հակասությունները առաջավոր ու հետադեմ ուժերի գաղափարական պայքարը, հին ու նոր մանկավարժության ջատագովների բախումները և այլն:

Գրիգոր Տաթևացին, /1346-1409թթ./ Որոտնեցուց հետո իր ժամանակին ճանաչված գիտնական է բանագիտական, հումանիտար գիտությունների համակարգում: Որպես բազում աշխատությունների հեղինակ և ուսուցչապետ Տաթևացին հայտնի է եղել ոչ միայն Հայաստանում այլև նրա սահմաներից դուրս: Նրան հաճախ հրավիրում էին դասախոսություններ կարդալու, իսկ տարբեր վայրերից գալիս էին նրան լսելու հատկապես Մեծոփա դպրոցից:

Գրիգոր Տաթևացու մասին, որպես մեծ ուսուցչապետ, գիտնական, գովեստով են խոսում գրեթե բոլոր աշակերտները՝ Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին:

Ժամանակի ճանաչված մանկավարժ արվեստի մեծ գիտակ Թ. Մեծոփեցին խոսելով իր ուսուցչապետի բնորոշ գծերի մասին հիշատակում է՝ որ նա եղել է խիստ սկզբունքային, հաստատակամ և խիզախ, անզիջող և ունեցել է մարդկանց ուսուցանելու, դաստիարակելու և համոզելու գործում արտակարգ շնորք, որ Տաթևացին «միշտ անմահ և աներկիւղ նախատում էր իր հակառակորդներին և ոչ ոք չէր համարձակվում ձեռք տալ նորան, ոչ իշխանը և ոչ նրա ստորադրեալը զի ամենքը սարսափեին նորա պատկառելի երեսից» /11-11/: Թ. Մեծոփեցին բարձրագույն կրթությունը ստանալով Տաթևի համալսարանում, ստանում է վարդապետության աստիճան և իր մանկավարժական գործունեության տարիներին բացում է դպրոցներ բարելավում ուսումնադաստիակչական աշխատանքների գործը կիրառում նոր մեթոդներ: Գր. Տաթևացու հրամանով Մեծոփեցին նշանակվում է Մեծոփա դպրոցի վերատեսուչ և ուսուցիչ: Արճիշեցիներին ուղղված իր գրության մեջ Տաթևացին Մեծոփեցու մասին այսպես է գրում «Ետու զմա հրաման ի իշխանություն դաս ասել,աշակերտ կարգել և զօրէնս աստուծոյ ուսուցանել» /12-12/: Ղ.Ալիշանը «Հայապատում» գրքում հիշատակում է որ Թովման 60 տարի անցկացրեց Մեծոփում, իսկ 35 տարի ուսուցչություն արեց և պատրաստեց, իմաստասեր, գրիչներ ու քարտուղարներ, հասարակական ու եկեղեցական գործիչներ, նկարիչներ և ծաղկողներ, Թովման, Եկեալ ի վանքն Մեծոփա և 60 ամ անդ կացեալ բազում ջանիվ առաքինությամբ և 35 ամ դաս ասելով ամենայն անձանց գրոց աշակերտելուց և բազում որդիս փառս ածեալ..... հանապաղ չարչարել զինքն ի յուսուցանել զ մանկունց» /13-7/:

Ակադեմիկոս հայ մեծ լեզվաբան Հր. Աճառյանը «Հայոց անձնանունների

բառարան»-ում դրվանտանքի խոսքեր է ասում Թ. Մեծոփեցու հասարակական – գրական գործունեության մասին, ապա գրում «Մեծոփեցու ամենակարևոր գրական գործն եմ համարում այն ձեռագիրքը որ նա իր աշակերտ Հովհան Արճիշեցուն արտագրել է տվել Կիրակոս Վիրապաց ձեռքով Կաֆայից բերված մի բնագրի վրայից, 1411-48 թվերին» /14-8: Շարունակության մեջ գրում է, որ նշված ձեռագիրն Ժ-ԺԱ դարերի /շատ լուրջ լեզվաբանական, բազմալեզվյան մի աշխատություն է,որ պատիվ է բերում թե հեղինակին,թե արտագրողին »: Ազնանունների բառարանում Աճառյանը նաև մատնանշում է, որ Տաթևի դպրոցի օրինակով Մեծոփեցի էլ իր ընտիր գրագիրների միջոցով արտագրել տվեց շատ հազվագյուտ ու արժեքավոր գրքեր և հարստացրեց իր դպրոցի գրադարանը:Այս ընդօրինակված գրքերի մի զգալի մասը Որոտնեցու, Տաթևացու և Սարգիս Սորբեցու աշխատություններն էին:

Գրիգոր Տաթևացու աշակերտներից է դպրոցական գործի կազմակերպիչ Առաքել Սյունեցին: Նա իր ուսուցչապետին ներկայացնում է որպես տաղանդաշատ հոգևոր,մշակույթային գործիչ, մեծ մանկավարժ, սկզբունքային, անզիճող, հաղթանդամ, գեղեցկախոս մարդու, «նախ, ասում է նա, ի տեսն ուրախանային և ապա խոսիլքն ցնծային,և ապա ընդ բառբառոյին համերության զուարճանային» /15-1/: Առ. Սյունեցին նաև պատմում է, որ Տաթևացին արտակարգ դասախոս է եղել, հմուտ գիտնական: Նա խիստ պատասխանատվություն է զգում իր կարդացած ամեն մի դասախոսության համար, այդ պատճառով էլ «ընթերցման է պարպող աշակերտաց էր մարզող... ծածուկ բանից բացահայտող» Որպեսզի նա գերազանց լավ դասախոսություն կարդա ասորմ էր Սյունեցին՝ «Ի գիշերի խոկման զիմասաս գրոց հաւաքեր, և աշակերտաց պատմեր» /16-2/:

Այսպիսի վերաբերմունք դեպի իր կարդացած դասախոսությունը անշուշտ մանկավարժական ազնիվ խղճի և բարձր պահանջի գիտակցումն է, դպրոցական զարգացած գործչի ամենաբնորոշ օրինակը: Ականավոր հայագետ Մ.Աբեղյանը միանգամայն իրավացի է գնահատում Տաթևացուն ասելով, որ նա մեծ հոգատարություն ու բարեխղճություն է ցուցաբերում դեպի իր ընթերցողները գործադրում էր մանկավարժական ճիշտ մեթոդներ ու հնարներ, որ նա լավ գիտեր տրամաբանությունը, գիտեր ամեն ինչ լուրջ խոհակամությամբ «կշռադատել... դասավորել... համեմատել... խորհել»: Հարցման գիրքը, եզրափակում է Աբեղյանը, դա հարց ու պատասխանով գրված մի դասագիրք է իր բոլոր ուսանողների հարցերի պատասխանն է» /17-3/:

Առաքել Սյունեցին ժամանակի հայտնի մատենագիր էր,բազմաթիվ աշխատությունների հեղինակ: Նա ունի նաև բանաստեղծություններ, միայն նրա «Սաղմոստագիրքը» որ գրված է չափածո, կազմված է 1740 տուն ոտանավորից /18-4/: Նա Տաթևացու հետ միասին գրել է «Սահմանադրություն դաստիարակության» մանկավարժական հայտնի աշխատությունը: Գրքի կանոներում բավականին տեղ է հատկացնում հայրենասիրությանը, կարգապահությանը և բարոյականային այլ որակների դաստիարակության հարցերին այլն: Բացի գրական ստեղծագործական աշխատանքից Առաքել Սյունեցին մանկավարժական բեղուն գործունեություն է ծավալել Սյունյաց դպրոցներում, դասավանդել գրականություն, տոմարա գիտություն,բնագիտական այլ առարկաներ: Հետ-

ևելով իր ուսուցչապետ Տաթևացու ուսանելի օրինակին, նա բոլոր ջանքերը գործադրում էր,որպեսզի դասավանդումը դնի բարձր հիմքի վրա: Պրոֆեսոր Մովսիսյանը վկայում է, որ Սյունեցին կազմել է նաև երեխաների դաստիարակության ու վարքի կանոներ-խրատներ, որոնց նպատակը հայրենասիրության կարգապահության, նիստ ու կացի այլ որակների դաստիարակումն է: Տաթևի բարձր տիպի դպրոցում աշխատելու տարիներին նա խրախուսում է իր սաներին ուսանողների ինքնուրույն աշխատանքները, որոնց մեջ տեսնում էր նրանց ստեղծագործական ձգտումները, խիզախումները:

Գ.Տաթևացու ամենատաղանդավոր աշակերտներից է Մաթեոս Ջուղայեցին: Հետաքրքրական է, որ ականավոր գիտնական Տաթևացու լուսավորական գործունեության մասին եղած տարբեր տեղեկությունները ամբողջապես համընկնում են Մ. Ջուղայեցու գրած կենսագրական տվյալներին, սա ապացույց է ժամանակակիցների օբյեկտիվ լինելուն, իրենց մեծ ուսուցչին հավուր պատշաճի ներկայացնելու և ըստ արժանավույն գնահատելու գործում: Ջուղայեցին այսպես է բնութագրել իր ուսուցչին. «անդադար ընթերցող աղքատասեր, հոգով խոնարհ, մտքով ստեղծագործող, դեմքով պայծառ ուսուցչապետ էր...» /19-5/:

Որպես ճանաչված ուսուցիչ – ուսուցչապետ Մ. Ջուղայեցին դասավանդել է Հայաստանի տարբեր նահանգների դպրոցներում: Նրա մոտ ուսանել են բազմաթիվ ուշիմ աշակերտներ, ուսանողներ,/Տաթևի համալսարանում/ մի քանի տասնյակ նշանավոր գործիչներ, պատմագիրներ, մանկավարժության ասպարեզի խոշոր դեմքեր:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սյունյաց նահանգում լուսավորական գործունեություն է ծավալել Աստղիկ անունով մի կին: Հր. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարան» - ում ներկայացրած ցուցակում /70 կին գործիչներ/ նշում է նաև Աստղիկին որպես ուսուցիչ, թուղթ կոկող, ծաղկազարդող, փորագրող, մագաղաթ պատրաստող /20-9/: Նա մանկավարժական գործունեություն է ծավալել Հավուց թառի վանական դպրոցում: Հավուց թառը գտնվում է Սյունյաց նահանգում, այժմյան Գառնիի մոտ: Ի դեպ նշենք, որ մեր պատմիչները, գրողները, մանկավարժներն ու հոգևոր մշակութային գործիչները շատ են գրել հայ կնոջ առաքինության, ճկուն մտքի, հարուստ երևակայության, աշխատասիրության, ընտանիքին, հայրենիքին ու ազգին նվիրվածության մասին: Այդ են վկայում՝ Մ. Խորենացուն, Եղիշեի, Կաղանկատվացու, Մ. Գոշի և մեր ժամանակների հետազոտողների՝ Մ.Աբեղյանի, Աբ. Մովսիսյանի, Հր. Աճառյանի,Ց. Սիմոնյանի ուսումնասիրությունները:

Այսպիսով, բազմաթիվ աղբյուրներից քաղած տեղեկությունների հիման վրա հնարավորինս ներկայացրեցինք քննարկվող ժամանակաշրջանի Սյունյաց նահանգի հոգևոր մշակույթային, կրթական գործի կազմակերպիչների լուսավորական գործունեությունը: Ուսումնասիրության բնույթից ելնելով մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէր ընդարձակել վերոհիշյալ փաստագրական նյութերի օրինակների ցանկը, համակողմանի հիմնավորել և ներկայացնել Հ. Որոտնեցու, Գ. Տաթևացու բեղուն գործունեության մասին տված նրանց աշակերտների դրվատանքի խոսքն ու հավորւպատշաճի արժանիքներն ու գնահատականներն:

Անշուշտ, մեզ հետաքրքրող պատմաշրջանին վերաբերող աղբյուրներում փաստերը շատ են, կարծում ենք, որ այսքանն էլ բավական է որոշ գաղափար կազմելու ականավոր գործիչների, նրանց սաների լուսավորական, կրթական գործունեության մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, Երևան,1946, էջ 357
2. Նույն տեղում, էջ 358
3. Նույն տեղում, էջ 360-361
4. Նույն տեղում, էջ 368
5. Նույն տեղում, էջ 382
6. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ-220,
7. Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ,1901, էջ 549,
8. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հատ բ,Երևան,1944 էջ-329-330,
9. Նույն տեղում, էջ 335
10. Գզոյան Ա.Ռ., Տաթևի համալսարան,Երևան, Զանգակ հր., 2003, էջ11
11. Կոստանյան Կ.,Թովմա Մեծոփեցի, Էջմինծին,1892, էջ125,
12. Հացունի Վ., Դաստիարակությունը հին հայոց քովք, Վենետիկ, 1923,էջ 105,
13. Մովսիսյան Աբ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմություն /5-15-րդ դդ/,Երևան,1958, էջ 80
14. Նույն տեղում, էջ 82-86
15. Նույն տեղում, էջ 119
16. Նույն տեղում, էջ 120
17. Նույն տեղում, էջ122
18. Նույն տեղում, էջ 129
19. Սիմոնյան Ց., Ակնարկներ հայ դպրոցի մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971,էջ 63
20. Օրբելեան Ստ.,Պատմական նահանգ Սիսական, Թիֆլիս, 1910, էջ245

ПРОСВЕТИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАИНАЗТОРОВ СЮНИКСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ОРГАНИЗАЦИИ В XIV-XV ВВ. - АРМИНЕ БАГДАСАРЯН - Историческая статья, основанная на изучении источников и видов учебных материалов, образовательных кратко рассмотрены организаторами Сюникской образования gorrtsuneutyune 14-15 вв. Эти цифры были образование реформаторов, школьные основатели, педагогические идеи hghatsogh, они отважно исполнителями этого профессора и Сюникский высокий типа школ, преподающих в области гуманитарных, естественных науках, теологии курсах, подготовка высококвалифицированных специалистов аналитика, а также опыт преподавания видных деятелей обсуждали а также другие вопросы педагогической, исторической и теоретической ценности.

***Ключевые слова**:* Образование, школы, учебные достижения, выдающиеся деятели, гимназий, Татев университет, Здание школы, рукописи, Матенадаран, педагоги.

ENLIGHTENMENT ACTIVITY OF THE SYUNIK STATE EDUCATIONAL ORGANIZATION ORGANIZERS IN THE 14th-15th CENTURIES - ARMINE BAGHDASARYAN - Based on the study of historical, pedagogical sources and alphabetic material, the lighting of the organizers of the educational work of the Syunik province in the 14th-15th centuries was briefly covered. These figures have always been teachers of humanities, natural sciences, theology and theology, as well as educators, teachers of the new school, pedagogical ideas, boldly introducing pedagogical ideas, and teaching high-quality humanities, natural sciences and theology in Syunik High School. as well as other issues of pedagogical, historical and theoretical value.

***Keywords**:* Education, school, enlightenment achievements, prominent figures, high school, Tatev Univers.